ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԲԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԲԱՀԾՇՁԲ-2015/1 ՃՀՀՍ-1 ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 04.05.2015թ. կնքված N ՏԾԻԳ-ԲԲԱՀԾՇՁԲ-2015/1 ՃՀՀՍ-1 պայմանագրում 2015թ. դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. Ելնելով ՀՀ կառավարության 19.11.2015թ N 1326-Ն որոշման պահանջներից, որի համաձայն նախատեսվել է Մ-3,Մարգարա-Վանաձոր-Վրաստանի սահման կմ 137+200 - կմ141+000 հատվածի N ՏԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-2015/2ՃՀ-3 պայմանագրով նախատեսված կատարման ենթակա մնացորդային աշխատանքներն իրականացնել մինչև 2015թ դեկտեմբերի 10-ը, իսկ վճարումներն իրականացնել 2016 թ.-ին, համապատասխան փոփոխություն է կատարվել վերոնշյալ հիմնանորոգման հեղինակային հսկողության ծառայությունների պայմանագրում:
Փոփոխության նկարագրություն:	Համաձայնագրով նախատեսվել է Պայմանագրի 1.1 կետով նախատեսված կատարման ենթակա Մ-3 Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման կմ137+200 - կմ141+000 հատվածի հիմնանորոգման մնացորդային հեղինակային հսկողության ծառայություններն իրականացնել մինչև 2015թ դեկտեմբերի 10-ը, իսկ վճարումները 2016թվականին:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 7.3 կետ և ՀՀ կառավարության 19.11.2015թ N 1326-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անդրանիկ Մովսեսյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ